

## ՀԱՅՏ

### ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

#### I. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Ծրագրի

Անվանում «Հայաստանում արձանագրվող որոշ վարակների համաճարակաբանական գործընթացի, ծագումնաբանական գործոնների, հարուցիչների կենդանի փոխանցողների բնութագրում, առողջության վրա ազդող շրջակա միջավայրի ընտրված գործոնների գնահատում»

Բնագավառ՝ 3.Բժշկական գիտություններ,

մասնագիտության դասիչ(ներ)\* 3.1 Ընդհանուր բժշկություն

2. Կազմակերպության

լրիվ և կրճատ անվանում, կազմակերպարարական ձև ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն», «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ», Պետական ոչ առևտրային կազմակերպություն  
ղեկավարի (գլխավոր տնօրեն) ազգանուն, անուն, հայրանուն Վանյան Արտավազդ Վրույրի

հասցե՝ Երևան, 0025, Մխիթար Հերացի, 12, Երևան, 0096, Դավիդ Մալյան 37  
հեռախոս +374 10 340144

Էլեկտրոնային հասցե info@ncdc.am,

3. Ծրագրի գիտական ղեկավարի

ազգանուն, անուն, հայրանուն Մելիք-Անդրեասյան Գայանե Գուրգենի  
գիտական աստիճան բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

պաշտոն ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի տնօրենի տեղակալ գիտական գծով

հեռախոս +374 10629924, +374 91549448

Էլեկտրոնային հասցե melikandreasyan@mail.ru

4. Ծրագրի իրականացման ժամկետ 01.01. 2019թ.-30.12.2019թ.

5. Պահանջվող հաստիքների քանակ 47

6. Պահանջվող ֆինանսավորման ծավալը 40780.0 հազար դրամ, այդ թվում՝

6.1 հիմնարար հետազոտությունների նպատակով \_\_\_\_\_ հազար դրամ

6.2 կիրառական հետազոտությունների նպատակով 40780.0 հազար դրամ

Կազմակերպության ղեկավարի ստորագրություն \_\_\_\_\_

«14» հունիսի 2018 թ.





## ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### a. Հիմնարար հետազոտությունների\*

### b. Կիրառական հետազոտությունների\*

#### 2.1 արդյունքի (արտադրանքի)

2.1.1 նկարագրությունը, հիմնական տեխնիկական  
բնութագրիչները, մրցակցային առավելությունները,  
կիրառության ոլորտ

Ներկայացված գիտական հետազոտությունների իրականացումը հնարավորություն կընձեռի, ուսումնասիրելով Հայաստանում մանրէային, վիրուսային և մակաբուծային ծագում ունեցող ախտաբանություններին բնորոշ համաճարակաբանական գործընթացը, պարզաբանել ներկա պայմաններում տարածաշրջանում որոշ վարակների առաջացմանը և տարածմանը նպաստող առավել նշանակալի գործոնները, բնութագրել անտրոպոնոզ և զոոնոզ վարակների պատճառագիտական կառուցվածքի և հարուցիչների կենսաբանական հատկությունների հնարավոր փոփոխականության միտումները, որոշել տարբեր աղբյուրներից անջատված մանրէների զգայունության պատկերը հակաբիոտիկների նկատմամբ, ինչպես նաև մանրէների ներհիվանդանոցային շտամների զգայունությունը կիրառվող ախտահանիչ միջոցների նկատմամբ՝ պարզաբանելով հաջորդիվ վերջինների օգտագործման արդյունավետությունը: Կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման հիմնավորված ուղղվածությունը և ռազմավարությունը կնպաստի հանրային առողջության ոլորտում դրական տեղաշարժերի, ապահովելով ազգաբնակչության կենսաբանական և հակահամաճարակային անվտանգությունը, հիվանդացության և հաշմանդամության իջեցումը: Վարակների առաջացման և տարածման ռիսկերի նվազեցումը կարևոր նախադրյալ է՝ երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման, պաշտպանունակության բարձր մակարդակի ապահովման, ֆինանսական միջոցների տնտեսման համար:

Առողջության վրա ազդող շրջակա միջավայրի գործոնների մոնիտորինգի շրջանակներում իրականացված բնակավայրերի աղմուկի մակարդակի գնահատման արդյունքները, աղմուկի քարտեզների ստեղծումը կօժանդակեն աղմուկի նվազեցման ուղղությամբ առավել նպատակային և արդյունավետ միջոցառումների իրականացմանը՝ կանխարգելելու և նվազեցնելու շրջակա միջավայրի գործոնների վնասակար ազդեցությունը բնակչության առողջության վրա: Ծրագրի տվյալ բաժնի հետազոտությունները, բացի կարևորագույն առողջապահական, էկոլոգիական և քաղաքաշինական հիմնահարց լինելուց, կարժանանան մեծ հասարակական արձագանքի՝ իբրև լուրջ ներդրում բնակչության առողջության և կենսամակարդակի բարձացման գործում:

\* Հետազոտությունների մասին տեղեկությունները (մինչև 2 էջ) լրացնել դրանց առկայության դեպքում:



Գիտական հետազոտությունների արդյունքները արտացոլվելու են գիտական հոդվածներում, թեզիսներում, տարբեր մակարդակների գիտաժողովներին ներկայացվող գիտական զեկույցներում, ատենախոսություններում, մենագրություններում, հանրային առողջության ոլորտի մեթոդական, ուսումնամեթոդական, նորմատիվային փաստաթղթերում, ընդգրկվելու են սանիտարական նորմերում և կանոններում, Առողջապահության նախարարի հրամաններում, ինչպես նաև կառավարության որոշումներում: Ուսումնամեթոդական փաստաթղթերը կիրառվելու են բժշկական բուհական և շարունակական մասնագիտական կրթական համակարգերում:

2.1.2 շուկայական պահանջարկի գնահատականը, այդ թվում՝ շուկայի համառոտ վերլուծություն, շուկայի այն սեգմենտի գնահատականը, որը կարող է արդյունքը (արտադրանքը) զբաղեցնել, վարականի համաճարակաբանական հսկողության համակարգի կատարելագործում, շրջակա միջավայրի վնասակար գործոնների բնութագրում:

2.1.3 շահութաբերության գնահատականը, այդ թվում՝ ֆինանսավորման աղբյուրների, ինքնարժեքի ձևավորման և շահույթի չափի նկարագրությունը

## 2.2 ծրագրի

2.2.1 ֆինանսական արդյունավետության գնահատականը, այդ թվում՝ ներդրումների չափը կազմակերպության կողմից և արտաքին աղբյուրներից, ներդրումների վերադարձելիության ժամկետների կանխատեսումը,

Արդյունքների հիման վրա մշակված մեթոդական և նորմատիվային փաստաթղթերի ներդրումը գործնական առողջապահություն կբարձացնի վարականի ախտորոշման, կանխարգելման, բուժման և դրանց դեմ պայքարի միջոցառումների տնտեսական արդյունավետությունը, բերելով ֆինանսական միջոցների տնտեսմանը:

2.2.2 իրականացմանն անհրաժեշտ մասնագետների առկայությունը կամ պատրաստման հնարավորությունները,

Ծրագիրը իրականացնող մասնագետները ունեն մեծ փորձ և ձեռքբերումներ ներկայացվող հետազոտությունների ոլորտում: Կենտրոնում առկա են՝ գիտության դոկտորներ (այդ թվում՝ 1-ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), գիտության թեկնածուներ, մասնագետներ, որոնք անցել են դասընթացներ դաշտային համաճարակաբանության, լաբորատոր մենեջմենտի, կենսաանվտանգության, որակի կառավարման դասընթացներ միջազգային ծրագրերի ( DETRA , MediPIET, MediLab, Հարավային Կովկասի դաշտային համաճարակաբանության և լաբորատոր մենեջմենտի) շրջանակներում:

2.2.3 հնարավոր ռիսկերի գնահատականը:



Հետազոտությունների համար օգտագործվող լաբորատոր նյութերի, պարագաների գների հնարավոր աճը, կարող է բերել նախատեսված ֆինանսական միջոցների որոշ սակավության և ազդեցություն ունենալ հետազոտությունների խնդիրների ամբողջական լուծման և արդյունքային ցուցանիշների վրա: Նմանատիպ ռիսկերի կանխման և հաղթահարման հնարավոր ուղիներն են՝ հետազոտությունների իրականացման ակտերնատիվ մեթոդների ու մոտեցումների կանխատեսում և պլանավորում:

## II. ԾՐԱԳՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Կենսաբանական գործոններով (մանրէային, վիրուսային և մակաբուժային բնույթի) պայմանավորված հիվանդությունները առ այսօր մարդու ախտաբանությունում ունեն զգալի նշանակություն: Դրանով պայմանավորված՝ վերջինների առաջացման, զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությունը, կանխարգելումը խիստ արդիական են՝ ինչպես ազգաբնակչության առողջության պահպանման, հաշմանդամության և մահաժողովրդի իջեցման, այնպես էլ երկրի տնտեսական իրավիճակի բարելավման և անվտանգության ապահովման առումով: Վերջերս ներդրված «մեկ առողջություն» գաղափարը, որն ընդգրկում է մարդկանց, կենդանիների, բույսերի առողջությունը և բնապահպանական գործոնները, բացում է նոր հեռանկարներ վարակների կանխարգելման և դրանց դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համար: Տվյալ մոտեցումը խիստ կարևորվում է վարակների համաճարակաբանական և պատճառագիտական օրինաչափությունների ուսումնասիրման ժամանակ, մասնավորապես՝ զոոնոզ վարակների դեպքում: Հարկ է նշել, որ զոոնոզ և անտրոպոնոզ վարակիչ հիվանդությաունները, ախտահարելով բնակչության գրեթե բոլոր տարիքային խմբերը, կարևորվում են երեխաների և երիտասարդների հաշմանդամության զարգացման և մահաբերության տեսանկյունից :

Մշտադիտարկումների արդիականությունը և կարևորությունը վարակների վերահսկման ոլորտում պայմանավորվում է հանրապետությունում, դեռևս առկա բազմաբնույթ պատճառներով, որոնք նպաստում են սննդային, ջրային, շփումա-կենցաղային, արյունա-շփումային բնույթի վիրուսային, մանրէային, մակաբուժային ծագում ունեցող վարակների առաջացմանը և տարածմանը: Մեր բնակչության բավականին ակտիվ տեղաշարժերի արդյունքում առկա է հանրապետություն նոր հարուցիչների, այդ թվում՝ ողջ աշխարհում կենսաախաբեկչության սպառնալիքի պայմաններում բարձր ախտածնություն ունեցող մանրէների և վիրուսների հնարավոր ներհոսքի վտանգը: Այդ ամենը կարող է բերել մեզ համար ոչ բնորոշ «նոր», կամ «վերացված» վարակիչ հիվանդությունների առաջացմանը և տարածմանը: Բացի այդ, տարբեր գործոնների ազդեցության արդյունքում հարուցիչների կենսաբանական հատկությունների փոփոխությունները կարող են հանգեցնել վերջինների ձևափոխված տարբերակների առաջացմանը, որոնց մոտ հնարավոր է ախտածնության աստիճանի աճ, դեղորայքների և



ախտահանիչ միջոցների նկատմամբ կայունության զարգացում: Ընդ որում, այդպիսի տարբերակներով հարուցված վարակները առավել ծանր են ընթանում, դժվար է նրանց բուժումը և կանխարգելումը: Մանրէների դեղորայքակայուն շտամները, հարուցելով տարբեր բնույթի վարակներ (սննդային, ջրային, օդային, շփման եղանակով փոխանցվող) և այլն, առավելապես կարևորվում են որպես բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների ծագումնաբանական գործոն: Այս առումով, խիստ կարևորվում են երկրում ախտածինների տեսակավորման ուղղությամբ աշխատանքները:

Չհաստատված ծագումնաբանությամբ սուր աղիքային վարակները զբաղեցնում են զգալի տեղ վարակական ախտորանության մեջ: Ներկայումս սուր աղիքային վարակների ծագումնաբանության վերծանումը ձեռք է բերում առավել կարևոր նշանակություն: Վերջին տարիներին սուր աղիքային վարակների ծագումնաբանության կառուցվացքում աճել է այսպես կոչված «ոչ ավանդական» հարուցիչների դերը, որոնց թվին են պատկանում կրիպտոսպորիդիաները: Կրիպտոսպորիդիաները նախակենդանիներ են, որոնք ախտահարում են մարդու և կենդանիների աղիների էպիթելյալ բջիջները:

Մեր տարածաշրջանում կան բազմաթիվ նպաստավոր պայմաններ, այսօր ամբողջ աշխարհում բավականին կարևորվող կենդանի փոխանցողների միջոցով տարածվող վարակների զարգացման համար: Այն է՝ Հայաստանի լանդշաֆտի յուրահատկությունը, տարբեր կլիմա-աշխարհագրական գոտիների առկայությունը, արյունածուծ հողվածոտանիների և նրանց տերերի բազմազանությունը և մեծաքանակությունը:

Համաճարակաբանական իրավիճակի առավելագույնս նորմալացման և հսկման, հիվանդությունների զարգացմանը նպաստող բոլոր գործոնների վրա արդյունավետ ազդելու, ինչպես նաև վարակների տարաբնույթ հարուցիչների շրջանառությունը նվազագույնի հասցնելու համար, անհրաժեշտ է վարակների համաճարակաբանական գործընթացների երկարաժամկետ շարունակական հետազոտությունների ընդլայնում, ինչը հնարավորություն կընձեռի վերջինների համաճարակաբանական հսկողության համակարգի մշտական վերահսկման և պարբերական կատարելագործման համար՝ ունենալով մեծ նշանակություն վարակների կանխարգելման և դրանց դեմ պայքարի կազմակերպման գործընթացում: Ներկայացվող շարունակական հետազոտությունները՝ ուղղված վարակների առաջացման պատճառների և զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությանը, հանդիսանալով կիրառական հետազոտություններ, խիստ կարևորվում են բժշկագիտության և առողջապահության համար, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում կանխարգելիչ բժշկության շարունակական զարգացման շրջանակներում՝ ստեղծելով գիտական հիմքեր վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ռազմավարական ծրագրերի մշակման համար:

Բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ գննումների (մոնիթորինգի) երկարաժամկետ



և շարունակական հետազոտությունների իրականացումը, արդյունքների վերլուծությունը, գնահատումը և ռիսկերի կառավարումը կարևոր նախադրյալ է՝ կանխարգելելու և նվազեցնելու շրջակա միջավայրի գործոնների վնասակար ազդեցությունը բնակչության առողջության վրա:

Մասնավորապես, աղմուկը 21-րդ դարի մարտահրավերներից է: Աղմուկը համարվում է շրջակա միջավայրի վնասակար կարևորագույն գործոններից մեկը, այն ոչ պակաս վտանգավոր է քան օդի և ջրի աղտոտումը: Մարդուն աղմուկից պաշտպանելու համար անհրաժեշտ է գիտելիք, փորձ, նորագույն տեխնիկական լուծումներ և նյութեր: Աղմուկի աղբյուրները բազմազան են և դրանցից յուրաքանչյուրի լուծումը պահանջում է անհատական մոտեցում: Աղմուկի առաջացման հիմնական պատճառներն են՝ տրանսպորտային հոսքերը, օդափոխման և ջեռուցման ժամանակակից համակարգերը, կենցաղային նորագույն տեխնոլոգիաները և այլ բազմազան ինժինեռատեխնիկական սարքավորումներ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ աղմուկը, շրջակա միջավայրում, տարեկան աճելով միջինը 0,5 դեցիբելով, ներկայումս հասել է այնպիսի մակարդակի, որ անհանգստացնում է քաղաքացիների /բնակիչների/ անդորրն ամենուր: Բնապահպանական ակուստիկայի փորձագետները կանխատեսում են, որ աղմուկի աճը կշարունակվի նաև մոտակա 30 տարվա ընթացքում:

Ուսումնասիրելով համաշխարհային խնդիրները աղմուկի վերաբերյալ, մասնագետների պնդմամբ ներկայումս ողջ աշխարհում, ինչպես նաև Երևան քաղաքում գրանցվում են աղմուկի այնպիսի մակարդակներ, որոնք պետք է գրանցվեին 2030-2035թթ.: Աղմուկի խոշոր աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտային հոսքերը, ժամանցի կենտրոնները (ռեստորաններ, գիշերային ակումբներ, կարաոկե, բառ, սրճարան և այլն), որոնք տեղակայվում են բնակելի տարածքներին շատ մոտ կամ բնակելի շենքերի առաջին և նկուղային հարկերում:

Գործող սանիտարական նորմերով սահմանված ծայնային ճնշման թույլատրելի մակարդակների գերազանցումը պատճառ է հանդիսանում ազգաբնակչության հիվանդացության աճի: Վերջին տարիներին ազգաբնակչության կողմից աղմուկի վերաբերյալ բողոքների թվի կտրուկ աճն ակնհայտ ցույց է տալիս, որ խնդիրը առկա է և պետք է գտնել պատճառը և տալ լուծում:

Հայտնի է, որ աղմուկի դեմ պայքարի հիմնական միջոցներից է համընդհանուր ճանաչում ստացած այսպես կոչված աղմուկի քարտեզների մշակումը, ինչը մի շարք զարգացած երկրներում իրականացվում է պարբերաբար, յուրաքանչյուր 5 տարին մեկ և հնարավորություն է տալիս ոչ միայն գրանցել աղմուկի մակարդակները շրջակա միջավայրում, այլ նաև հայտնաբերել աղբյուրները, մշակել աղմուկի դեմ պայքարի ուղիներ ճարտարապետաշինարարական, ինժեներատեխնիկական, աղաքաշինական, վարչակազմակերպչական և այլ ուղիներով: Վերջին անգամ Երևան քաղաքի աղմուկը քարտեզագրվել է 1976թ.: Մինչդեռ հանրապետության քաղաքներից ոչ մեկը չունի աղմուկի քարտեզ, աղմուկի դեմ պայքարի միջազգային փորձն անտեսված է, աղմուկից պաշտպանվելու նախագծային



ճարտարապետաշինարարական, կոնստրուկտորական մեթոդների լայն զինանոցը, որով հարուստ է ժամանակակից քաղաքաշինական ակուստիկան, չի օգտագործվում:

Աշխատանքի հիմնական խնդիրներն են՝ ուսումնասիրելով Հայաստանում մանրէային, վիրուսային և մակաբուծային ծագում ունեցող ախտաբանություններին բնորոշ համաճարակաբանական գործընթացը, պարզաբանել ներկա պայմաններում տարածաշրջանում որոշ վարակների առաջացմանը և տարածմանը նպաստող գործոնները, հայտնաբերելով առավել նշանակալի գործոնները, բնութագրել անտրոպոնոզ և զոոնոզ վարակների պատճառագիտական կառուցվածքը և հարուցիչների կենսաբանական հատկությունների հնարավոր փոփոխականության միտումները, հիմնավորել կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման ուղղվածությունը և ռազմավարությունը, բերելով հանրային առողջության ոլորտում դրական տեղաշարժերի, ապահովելով ազգաբնակչության կենսաբանական և հակահամաճարակային անվտանգությունը: Խնդիր է դրվում՝ աղմուկի քարտեզների ստեղծման նպատակով հավաքագրել և մշակել տվյալների բազա:

Գիտական կենտրոնում առկա են բարձրորակ գիտական կադրեր և նյութական բազա հետազոտությունների իրականացման համար:

Ծրագրի հետազոտությունների իրականացման ընթացքում օգտագործվելու են վարակների համաճարակաբանական գործընթացի ուսումնասիրման ժամանակակից միջազգային չափանիշները և բնութագրիչները: Կիրառվելու են ժամանակակից մանրէաբանական, վիրուսաբանական, մակաբուծաբանական, իմունաբանական, միջատաբանական, մոլեկուլագենետիկական, վիճակագրական մեթոդները:

Աշխատանքների ուղղությունները և ակնկալվող արդյունքները.

- Հակամանրէային դեղերի նկատմամբ շրջանառող ախտածին և պայմանական ախտածին մանրէային կուլտուրաների զգայունության որոշման, կայունության մեխանիզմների հայտնաբերման միջոցով կայուն և/կամ բազմակայուն շտամների հանդեպ հսկողության և մշտադիտարկման իրականացում: Ակնկալվող արդյունքները՝ ստացված արդյունքների հիման վրա կկատարվեն վերլուծություններ՝ մանրէային կայուն շտամների շրջանառության վերաբերյալ: Կատարված վերլուծությունների հիման վրա կմշակվեն առաջարկություններ, կստեղծվի ընտրված մարզերում և/կամ բժշկական կազմակերպություններում շրջանառող մանրէային կայուն շտամների տվյալների բազա:

- Բժշկական կազմակերպություններում (ԲԿ) շրջանառող մանրէների և տվյալ կազմակերպությունում կիրառվող ախտահանիչ նյութերի նկատմամբ դրանց զգայունության ուսումնասիրություն: Ակնկալվող արդյունքները՝ ԲԿ-ում շրջակա միջավայրի մակերեսներից անջատված հարուցիչների զգայունության



որոշում տվյալ կազմակերպությունում օգտագործվող ախտահանիչ միջոցների նկատմամբ և այդ նյութերի նկատմամբ կայուն շտամների բացահայտման դեպքում ախտահանիչ նյութի փոխարինման վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում ԲԿ-ին: Ախտահանիչ նյութերի նկատմամբ հոսպիտալային շտամների կայունության միտումների բացահայտում և ախտահանիչ նյութերի նպատակային կիրառման առաջարկությունների մշակում, ինչպես նաև դրանց նկատմամբ հոսպիտալային շտամների կայունության կանխարգելման ուղղությամբ:

- Հելիկոբակտեր պիլորիով ներընտանեկան վարակվածության հետազոտություն: Ակնկալվող արդյունքները՝ ստամոքս-աղիքային տրակտի վերին հատվածների բորբոքային հիվանդություններով տառապող հիվանդների մոտ HP-ի մանրէների դերի բացահայտում: HP-դրական պացիենտների ընտանիքների անդամների վարակվածության դեպքերի բացահայտում:

- Բնակչության տարբեր խմբերում վիրուսային ՀԲ-ի և ՀՑ-ի վարակվածության և ՀՑ-ի գենային տարբերակների տարածվածության որոշում: Ակնկալվող արդյունքները՝ բնակչության շրջանում ՀԲ-ի և ՀՑ-ի վարակվածության վաղ բացահայտում: ՀԲ-ով և ՀՑ-ով վարակված անձանց քրոնիզացման միտումների բացահայտում և բուժման ուղղորդում: ՀԲ-ի և ՀՑ-ի վարակի աղբյուրի թվաքանակի և բարդությունների զարգացման նվազեցում, հաջորդիվ ՀԲ-ի և ՀՑ-ի հիվանդացության նվազեցում: Արտաընդերային վիրուսային հեպատիտների ներհիվանդանոցային վարակման նվազեցում: Բուժաշխատողների մասնագիտական անվտանգության ապահովում:

- Բացահայտել բարդացած մանկաբարձական վերհուշով և հղիության ժամանակ որոշակի կլինիկական ախտանշաններ ունեցող հղիների շրջանում լիստերիոզով վարակվածության մակարդակը: Ակնկալվող արդյունքները՝ մանկաբարձական ախտաբանությունում լիստերիա մոնոցիտոգենեսի դերի բացահայտում: Հղիության ինքնաբուխ կրելախախտերի, վաղաժամ ծննդաբերությունների պտղի ներարգանդային թերզարգացման դեպքերի նվազեցում: Լիստերիոզ հիվանդության համաճարակաբանական հսկողության համակարգի լիարժեք գործադրում: Լիստերիոզի վերաբերյալ բժշկական անձնակազմի և բնակչության իրազեկման մակարդակի բարձրացում:

- Բացահայտել բարդացած մանկաբարձական վերհուշով և հղիության ախտաբանություններով հղիների շրջանում տոքսոպլազմոզով վարակվածության մակարդակը, տոքսոպլազմոզով պայմանավորված ախտաբանությունների մասնաբաժինը և կլինիկական առանձնահատկությունները: Ակնկալվող արդյունքները՝ պարզաբանել ներկայում տոքսոպլազմոզի դերը հղիության և նորածինների ախտաբանությունում:



- Հետագոտել ՀՀ ազգաբնակչության ռիսկի խմբերի շրջանում Օ տենդի շճադրական դեպքերը, ինչպես նաև փոխանցող տղերի վարակվածությունը: Ակնկալվող արդյունքները՝ պարզաբանել Օ տենդի հարուցչի շրջանառությունը հանրապետության տարածքում:

- Անհայտ ծագումնաբանությամբ սուր աղիքային վարակներով տառապող անձանց հետագոտել կրիատոսպորիդիոզի նկատմամբ, կիրառելով համալիր մակաբուժաբանական և իմունաքրոմատոգրաֆիկ մեթոդները: Իրականացնել կրիատոսպորիդիոզի նկատմամբ հետազոտություններ աղիքային վարակների ջրային բռնկումների ծագումնաբանությունը պարզելու նպատակով: Ակնկալվող արդյունքները՝ հետազոտությունների արդյունքները հնարավորություն կնձեռեն ճշտելու կրիատոսպորիդիոզի տարածվածությունը և պարզելու դրա նշանակությունը սուր աղիքային վարակների ջրային բռնկումների առաջացման գործում:

-Ուսումնասիրել Paraclin S համակարգի տեղեկատվությունը աղիքային հելմինթոզների և պրոտոզոոզների ախտորոշման գործընթացում: Ակնկալվող արդյունքները՝ համակարգի ներդնումը հնարավորություն կտա ընդլայնել մակաբուժաբանական ախտորոշիչ մեթոդների ցանկը, որը կնպաստի հելմինթոզների և պրոտոզոոզների ախտորոշման արդյունավետության բարձացմանը:

- Գնահատել լեյշմանիոզի իրական տարածվածությունը և հիվանդության տարածման ռիսկի գործոնները, ինչպես նաև գնահատել լեյշմանիոզի իրական տարածվածությունը և հիվանդության տարածման ռիսկի գործոնները: Ակնկալվող արդյունքները՝ Բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում բնակչության շրջանում: Լեյշմանիոզի կանխարգելման առաջնահերթ միջոցառումների կազմակերպման առաջարկությունների ներկայացում:

- Հայաստանի Հանրապետությունում տարածված փոխանցողների նույնականացում, դրանց տարածագոտիների քարտեզագրում: Ակնկալվող արդյունքները՝ ՀՀ տարածքի՝ փոխանցողով պայմանավորված հիվանդությունների տարածման ռիսկի գնահատում և քարտեզագրում:

-Բնութագրել Երևան քաղաքի տարբեր համայնքների առավել աղմկոտ տարածքներում շրջակա միջավայրի վրա ազդող աղմուկի մակարդակները: Ակնկալվող արդյունքները՝ աղմուկի քարտեզների ստեղծման նպատակով հավաքագրել և մշակել տվյալների բազա, ինչի հիման վրա ստեղծել աղմուկի քարտեզներ, որոնք հստակ պատկերացում կտան բնակավայրերում աղմուկի մակարդակի վերաբերյալ: Մշակված աղմուկի քարտեզները կներկայացվեն համապատասխան լիազոր մարմիններին, որոնք կօժանդակեն աղմուկի նվազեցման ուղղությամբ իրականացնել առավել նպատակային և արդյունավետ միջոցառումներ՝ բնակչության առողջության պահպանման համար:



#### IV. ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ю.Т.Алексанян, Ж.Р.Бабаян «Чувствительность микроорганизмов к дезинфектантам», Монграфия, Ереван, 2015, 176с.
2. Ж.Р.Бабаян ,Ю.Т.Алексанян, С.А.Овакимян, А.В.Бабаханян «Получение новых композиций и изучение их бактерицидной активности», Ж.Медицинская наука Армении, 2015, т. LV, N 3, с. 32-39.
3. Ն.Մ.Հարությունյան, Ա.Ա.Լալայան, Յու.Թ.Ալեքսանյան, Գ.Գ.Մելիք-Անդրեասյան, Կ.Վ.Հարությունյան, Ա.Հ.Թոնյան «Պայմանական ախտածին էնտերոբակտերիաների և պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերիաների ազդեցության համեմատական գնահատականը», Հայաստանի բժշկագիտություն, 2015, հ. LV, N 32, էջ 48-52.
4. В. Ю Азатян, М.В Шмавонян, Л. К.Есаян, А. А. Аветисян , Л. А.Шариманян, Г. Г. Мелик-Андреасян «Бактериологический спектр слизистой ротовой полости при острых вирусных гепатитах» Научно-практический журнал «Кровь», 2015, 1(19) с. 63-65.
5. A.V. Tsakanyan, Yu.T. Aleksanyan «Epidemiological surveillance markers of campylobacteriosis investigation in the Republic of Armenia», Conferece Abstracts, «Current Issues of Medical Science», The 95<sup>th</sup> Aniversary State Medical University after M.Heratsi, 12th-15th October, 2015, Yerevan, Armenia, The New ARMENIAN MEDICAL JOURNAL, Supplement, Vol.9, No3, Oktober, 2015, p.132.
6. 46.G.G.Melik-Andreasyan, L.S.Voskanyan, H.L.Ghazinyan, A.S.Danilov «Updating status of parenteral viral hepatitis in Armenia»- Conferece Abstracts, «Current Issues of Medical Science», The 95<sup>th</sup> Aniversary State Medical University after M.Heratsi, 12th-15th October, 2015, Yerevan, Armenia, The New ARMENIAN MEDICAL JOURNAL, Supplement, Vol.9, No3, Oktober 2015, p.124.
7. N.M.Harutyunyan, A.A.Lalayan, G.G.Melik-Andreasyan «The Pathogenicity of conventional pathogenic enterobacteria» Conferece Abstracts, «Current Issues of Medical Science», The 95<sup>th</sup> Aniversary State Medical University after M.Heratsi, 12th-15th October, 2015, Yerevan, Armenia, The New ARMENIAN MEDICAL JOURNAL, Supplement, Vol.9, No3, Oktober 2015, p.118.
8. А.В.Цаканян «Использование антибиотикограмм микроорганизмов при экспертизе пищевых продуктов». – Российско-Армянский (Славянский) университет, республиканская конференция «Значение судебной экспертизы в борьбе с преступностью», 30 октября 2014г., Ереван, 2015, с. 44-49.
9. А.В Цаканян , Ю.Т.Алексанян, Г.Г. Мелик-Андреасян, К.Л.Мамиконян, Г.Ж.Ханджян, Т.О.Аветисян, Н.А.Андреасян, В.Ю. Азатян, С.Т.Мартirosян «Антибиотикочувствительность и резистентность Escherichia coli в Республике Армения» -Նյութերի ժողովածու Հայաստանի 4-րդ միջազգային բժշկական համագումար, «Միասին՝ հանուն ազգի առողջության», հուլիս 2-4, 2015, Երևան, էջ 327-328.
10. Г.Г.Мелик-Андреасян, И.Э.Маркосян Л.С.Восканян, А.С.Данилов «Мониторинг заболеваемости острыми вирусными гепатитами в Армении» Նյութերի ժողովածու, Հայաստանի 4-րդ միջազգային բժշկական համագումար, «Միասին՝ հանուն ազգի առողջության», հուլիս 2-4, 2015, Երևան, էջ 326-327.
11. Լ.Պարոնյան, Հ.Ապրեսյան, Ա.Վանյան, Ա.Քեչիշյան « Ընդերային լեյշմանիոզի հիվանդացության միտումները Հայաստանում, 1999-2014թթ., հետահայաց վերլուծություն», Նյութերի ժողովածու, Հայաստանի 4-րդ միջազգային



բժշկական համագումար, «Միասին՝ հանուն ազգի առողջության», հուլիս 2-4, 2015, Երևան, էջ 129-130.

12. Կ.Գրիգորյան, Լ.Պարոնյան, Ա.Վանյան, Ա.Քեշիշյան «Էխինակոկոզի տարածվածության խաչաձևև համաճարակաբանական հետազոտություն Արագածոտնի մարզում»- Նյութերի ժողովածու Հայաստանի 4-րդ միջազգային բժշկական համագումար, «Միասին՝ հանուն ազգի առողջության», հուլիս 2-4, 2015, Երևան, էջ 130-131.
13. Ж.Р. Бабаян , Ю.Т., Алексанян, А.В. Бабаханян, А.Э. Казарян, А.В. Маргарян Г.Г.Мелик-Андреасян «Бактерицидные композиции на основе функционально замещенных четвертичных аммониевых солей» , Materials of International Scientific Conference(12-13 of March, 2015, Kharkiv, Ukraine),dedicated to the 210th anniversary of Kharkiv National Medical University and the 85th anniversary of the foundation of the Epidemiology Department,Kharkiv , «Epidemiological Research in Clinical and Preventive Medicine: Achievements and Prospects», 2015, p. 29-31
14. А.В.Цаканян, Ю.Т.Алексанян, Г.Ж Ханджян, К.Л. Мамиконян «Антибиотико-чувствительность микроорганизмов, выделенных от детей раннего возраста в республике Армения»- Materials of International Scientific Conference(12-13 of March, 2015, Kharkiv, Ukraine),dedicated to the 210th anniversary of Kharkiv National Medical University and the 85th anniversary of the foundation of the Epidemiology Department,Kharkiv, «Epidemiological Research in Clinical and Preventive Medicine: Achievements and Prospects», 2015, p. 246-248.
15. Д.В. Манукян, А.Ш. Кешишян, Г.Г. Мелик-Андреасян «Переносчики возбудителей трансмиссивных инфекций в Республике Армения», Materials of International Scientific Conference(12-13 of March, 2015, Kharkiv, Ukraine),dedicated to the 210th anniversary of Kharkiv National Medical University and the 85th anniversary of the foundation of the Epidemiology Department,Kharkiv , «Epidemiological Research in Clinical and Preventive Medicine: Achievements and Prospects», 2015, p. 166-168.
16. С.А.Овакимян, А.В.Бабаханян, Ж.Р.Бабаян « Изучение антимикробной активности аммониевых солей, содержащих пиразольное кольцо»,Сб.научных трудов по материалам VII Междунар.научно-практич.конференц. «Теоретические и прикладные аспекты современной науки», Белгород,2015, ч.1,с.50-53.
17. L.Paronyan, H.Apresyan, A.Galstyan, A.Keshishyan, A.Vanyan «Trends of Visceral Leishmaniasis in Armenia,1999-2014», Abstracts Book International Conference on Emerging Infectious Diseases, August 24-26,2015, Atlanta,Georgia, (Board 484),p.221-223
18. L.Paronyan, H.Apresyan, A.Galstyan, A.Keshishyan, A.Vanyan «Trends of Morbidity of Visceral Leishmaniasis in Armenia,1999-2014, retrospective analysis», Abstracts Book 4th International Medical Congress of Armenia, Yerevan,2015,p.129-130.
19. A.Keshishyan «Reference Laboratory of Malaria as an Element of Vigilance in Armenia», Abstracts Book , International Conference on Emerging Infectious Diseases, August 24-26,2015, Atlanta,Georgia, (Board 46) ,p.64.
20. G.G.Melik-Andreasyan, L.S.Voskanyan, H.L.Gazinyan, I.E.Markosyan,A.S.Danilov «Serologic monitoring of HBV and HCV in Armenia», Abstract Book, «APASL Single Topic Conference Focus on the Virus Hepatitis B», 3-6 Oktober 2015, Yerevan, BLOOD, scientific-practical journal, 2015,N2(20),p52.
21. H.Gazinyan, V.Asoyan, A.Mkhitaryan,G.Melik-Andreasyan «Hepatitis B reactivation in cancer patients undergoing chemotherapy», Abstract Book, «APASL Single Topic



Conference Focus on the Virus Hepatitis B», 3-6 Oktober 2015, Yerevan, BLOOD, scientific-practical journal, 2015,N2(20),p49.

22. Լ.Ավետիսյան, Ա.Վանյան, Լ.Պարոնյան «Լաբորատոր ոլորտի մարդկային ռեսուրսների գնահատումը Հայաստանում լաբորատոր որակի կառավարման համակարգի ներդրման տեսակետից», Նյութերի ժողովածու, Հայ բժիշկների 4-րդ միջազգային կոնգրես, Երևան, 2015, էջ 324-325:
23. N.Bakunts, L.Avetisyan, A.Vanyan «Biosafety Cabinets Testing, Calibration Problems in the Armenian Ministry of Health laboratories», Abstract book, International Conference on Emerging Infectious Diseases, August 24-26, 2015, Atlanta, Georgia, p.82-83.
24. G.Melik-Andreasyan, H.Ghazinyan «Epidemiology of HBV infection in Armenia», Abstract Book, «APASL Single Topic Conference Focus on the Virus Hepatitis B», 3-6 Oktober 2015, Yerevan, BLOOD, scientific-practical journal, 2015,N2(20),p51.
25. A.Mkhitarian, H.Gazinyan, A.Asoyan, G.Melik-Andreasyan, V.Sargsyan «HBV/HDV in Armenia», Abstract Book, «APASL Single Topic Conference Focus on the Virus Hepatitis B», 3-6 Oktober 2015, Yerevan, BLOOD, scientific-practical journal, 2015,N2(20),p68.
26. V.Yu.Azatyanyan, M.V.Shmavonyan, G.G.Melik-Andreasyan «The affection in the mucous membrane of cheeks and tongue in viral hepatitis B», Abstract Book, «APASL Single Topic Conference Focus on the Virus Hepatitis B», 3-6 Oktober 2015, Yerevan, BLOOD, scientific-practical journal, 2015,N2(20),p69.
27. Н.М.Арутюнян, А.А.Лалаян, Г.Г.Мелик-Андреасян, В.Ю.Азатян «Обнаружение кишечного дисбактериоза у лиц, перенесших кишечные инфекции или соматические заболевания кишечного тракта», Материалы Двадцать первой Объединенной Российской гастроэнтерологической Недели, 12-14 октября 2015г., Москва. Российский журнал гастроэнтерологии и колопроктологии. Приложение N 46, 2015, том XXV, N 5, с.99
